ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշվետվություն 2015 թ. ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

/զեկուցողներ՝ Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների ներկայացուցիչներ /

2. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի իրականացման մասին հաշվետվության ներկայացում:

/զեկուցող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյան /

3. Այլ հարցեր

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամներ՝

Վ.Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ
Ջ.Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա.Ալավերդյան	«Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «ՈՒՆիսոն» հասարակական կազմակերպության նախագահ
Ս.Թադևոսյան	«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Մկրտչյան	«Սկարպ» առողջական կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ
Լ.Ներսիսյան	«Աստղիկ» հասարակական կազմակերպության նախագահ
Ս.Մաղաքյան	«Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության նախագահ
Հ.Աբրահամյան	Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ
Ա.Կեսոյան	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են՝

Ժ.Ասատրյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային և առողջապահական բնագավառներում բյուջետային ընթացիկ

	ծախսերի ծրագրավորման վարչության պետի իրավախորհրդատու (նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով)
Գ. Չիլինգարյան	ՀՀ ԱՆ Բժշկական օգնության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ (նախարարի տեղակալ Վ.Պողոսյանի առաջարկով)
Ն.Հովհաննիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ (նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանի առաջարկով)
Ֆ.Դանիելյան	«Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահի առաջին տեղակալ (միության նախագահ Ա. Հակոբյանի առաջարկով)
Մ.Խաչատրյան	ՀԽՄ նախագահության քարտուղար (միության նախագահ Գ. Գրիգորյանի առաջարկով)

Հրավիրվածներ՝

Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևան քաղաքի հանձնաժողովի նախագահ
Վ. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Լ.Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Տ.Բաղդոյան	ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Հ.Արշակյան	ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Ա. Հակոբյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ,

	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Վ. Բակլաչյան	ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ռ. Զաքարյան	Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետ
Վ. Ջաղինյան	ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ա. Շահնազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ն. Ճաղարյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Գ. Դանիելյան	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Վ. Հունանյան	ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար

Ա. Գյունաշյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ն. Բալայան	ՀՀ ԱՍՀ նախարարի խորհրդական
Ա. Մանգասարյան	ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության պետ
Ա. Սիմոնյան	ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԲՍՓ գործակալության իրավախորդատու
Ց. Բեժանյան	ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության տեղեկատվական ապահովման բաժնի պետ
Գ. Գյունաշյանյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Ա. Դանիելյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Ռ. Զաքարյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության բաժնի պետ
Ա. Ստեփանյան	«Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության ղեկավար
Ի. Սարգսյան	«Սեյվ դը Չիլդրեն» ներկայացուցիչ
Գ. Գալստյան	«Սեյվ դը Չիլդրեն» ներկայացուցիչ
Մ. Մալխասյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP)
Մ. Պողոսյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
Հ. Ղուկասյան	ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ
Ա Մանուկյան	ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ
Զ. Բաթոյան	«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձնաց միության նախագահ

Հ. Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Աբրահամյան	«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնի ղեկավար
Ս. Ժամկոչյան	«Հավատ» վատ լսող երեխաների մայրերի միություն» ՀԿ նախագահ
Ս. Խաչատրյան	«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի տնօրեն ՀԿ նախագահ
Հ. Մկրտչյան	«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Հ. Բալասանյան	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա. Էլոյան	ՀՀ ԱՍՀՆ «ՀՄԿԱՎԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա. Հակոբյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ
Ա. Բալյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության գլխավոր մասնագետ
Ա. Հայրապետյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Հ. Մկրտչյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ
Ք. Ստեփանյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ

Ս.թ. մարտի 15-ին տեղի ունեցավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ Հանձնաժողով/ հերթական նիստը, որը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանը:

Ողջունելով Հանձնաժողովի անդամներին և հրավիրված անձանց՝ Հանձնաժողովի նախագահ պարոն Ասատրյանը նշեց, որ 2015 թվականին մեծ ծավալի աշխատանք է կատարվել բոլոր շահագրգիռ մարմինների կողմից և կարելի է հստակ արձանագրել, որ աստիճանաբար կոտրվում է այն մոտեցումը, որ հաշմանդամություն ունեցող անձանց միայն օգնություն և խղճահարություն է պետք: Նա նշեց նաև, որ Հանձնաժողովը պետք է իր գործառույթների շրջանակներում այս տարի ևս շարունակի ակտիվորեն աշխատել հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների ստեղծման և հավասար հնարավորությունների ապահովման համար, հատկապես, հաշվի առնելով այն, որ 2016 թվականը հայտարարվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի: Պարոն Ասատրյանը կարևորեց նաև այն, որ 2016 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ կառավարություն, այնուհետև ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվելու հաշմանդամության ոլորտի այդքան երկար սպասված նոր օրենքի նախագիծը, քանի որ գործող օրենքը ընդունվել է դեռևս 1993 թվականին, բազմաթիվ փոփոխություններ են տեղի ունեցել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում և ներկայիս հարաբերությունները կարգավորելու համար նոր օրենքը ունենալու պահը հասունացել է:

Բացման խոսքից հետո Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանի առաջարկով Հանձնաժողովի անդամները հաստատեցին ներկայացված օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցան Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևան քաղաքի հանձնաժողովի նախագահ Կ. Արեյանը, ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Վ. Բակլաչյանը, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Տ. Բադոյանը, ՀՀ Վայոց Ձորի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Մ. Հարությունյանը, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Լ. Մուրադյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Ա. Հակոբյանը, ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային

հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյանը, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Հ. Արշակյանը, ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար Ս. Խաչատրյանը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյանը, ՀՀ Տավուշի մարզի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար Ն. Ճաղարյանը, ովքեր ներկայացրեցին Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների կողմից 2015 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքները: Զեկուցողները նշեցին, որ 2015 թվականին նախատեսված միջոցառումները իրականացվել են ամբողջությամբ, սակայն Երևանում և մարզերում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմնականում կապված են քաղաքաշինական միջավայրի մատչելիության ապահովման և զբաղվածության մակարդակի բարձրացման հետ /հաշվետվությունները կցվում են/:

ՀՀ մարզային և Երևան քաղաքի ներկայացուցիչները արդյունավետ համագործակցության համար շնորհակալություն հայտնեցին Հանձնաժողովի նախագահ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանին, հասարակական կազմակերպություններին /«Սատար», «Հույսի Կամուրջ», «Փյունիկ», «Ագաթ», «Ունիսոն» և այլն/, միջազգային կազմակերպություններին /«Հայկական Կարիտաս», «Վորլդ Վիժըն», «Առաքելություն Հայաստան», «Սեյվ դը չիլդրեն» և այլն/, ինչպես նաև կարևորեցին այն մեծ աշխատանքը, որն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության ու զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցության միջոցով:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նույնպես բարձր գնահատեց Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևանի քաղաքի և մարզային հանձնաժողովների կողմից կատարված աշխատանքները և հույս հայտնեց, որ 2016 թվականին այն կլինի ավելի արդյունավետ և տեսանելի:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ տիկին Ջ. Բաղդասարյանը տեղեկացրեց, որ Հանձնաժողովի անդամներին և հրավիրվածներին բացի նիստի օրակարգը և համապատասխան նյութերը տրամադրված է նաև ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար

2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 40-Ն արձանագրային որոշումը և խնդրեց հետևողական լինել և ակտիվ մասնակցություն ունենալ այդ միջոցառումների իրականացման ընթացքում:

Հանձնաժողովի անդամներ «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանը և «Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախագահ Սուրեն Մաղաքյանը խնդրեցին մարզային հանձնաժողովի ներկայացուցիչներին իրենց հաշվետվություններում ուշադրություն դարձնել հաշմանդամության ոլորտին վերաբերող տերմինաբանությանը և ձևակերպումներին:

Հանձնաժողովի անդամ «Փյունիկ» ՀԿ-ի նախագահ պարոն Հ. Աբրահամյանը խնդրեց ուշադրություն դարձնել մարզերում և Երևան քաղաքում առկա մարզական հաստատությունների մատչելիության խնդրին:

Հանձնաժողովի անդամ «Սկարպ» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Մկրտչյան առաջարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին քննարկել Սևանա լճի լողափներից մեկը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու հարցը: Հանձնաժողովի նախագահ պարոն Ա.Ասատրյանը, կարևորելով մատչելի լողափ ստեղծելու գաղափարը, «Սկարպ» ՀԿ-ի նախագահ Ա. Մկրտչյանին առաջարկեց մարզային հանձնաժողովին ներկայացնել մատչելի լողափ ստեղծելու ծրագրի նախագիծը: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, Ա. Հակոբյանը պատրաստակամություն հայտնեց օժանդակել այս հարցի լուծմանը՝ խոստանալով տրամադրել Սևանա լճի ափին գտնվող իր կողմից վարձակալության վերցրած 1 հա տարածքը:

«Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանն առաջարկեց ներկայացվող հաշվետվությունները նախապես ուղարկել Հանձնաժողովի անդամներին, որպեսզի վերջիններս կարողանան նախապես ծանոթանալ և, ժամանակը ավելի արդյունավետ օգտագործելու համար, նիստի ընթացքում քննարկել կատարված առավել կարևոր աշխատանքները: Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրայնը նշեց, որ հանձնաժողովների կողմից կատարվում են բազմաթիվ աշխատանքներ, որոնք պետք է պատշաճ ներկայացվեն, սակայն համաձայնեց, որ իրականացված աշխատանքները պետք է ներկայացվեն այնպես, որ հնարավոր լինի կազմակերպել դրանց արդյունավետ քննարկումը: Պարոն Ասատրյանը առաջարկեց գործընկերների հետ համագործակցությամբ մշակել ձևաչափ, որի համապատասխան բաժիններում ընդգրկված կլինեն մարզում կատարված աշխատանքների քանակական և ուշադրության արժանի այլ տվյալներ, ինչպես նաև կառանձնացվեն այն բոլոր էական նշանակություն ունեցող աշխատանքները, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տեսանկյունից առավել կարևոր են: Հանձնաժողովի նիստին հրավիրված «Հաշմանդամություն ունեցող անձանց

շահերի պաշտպանության ազգային դաշինք» ԻԱՄ-ի նախագահ տիկին Զ. Բաթոյանը նշեց, որ հաշվետվությունների ձևաչափի մշակման կամ հաշվետվությունների ներկայացման ընթացքում նպատակահարմար է օգտագործել նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորությունները (սլայդներ, պրեզենտացիաներ), որոնց միջոցով էլ ավելի տեսանելի լինի կատարված աշխատանքները:

«Աստղիկ» ՀԿ-ի նախագահ պարոն Լ. Ներսիսյանը նշեց, որ հաշվետվություններում անհրաժեշտ է ներկայացնել նաև այն ինչը դեռ պետք է արվի՝ այսինքն, ներկայացնել քանակական տվյալներ մարզերում և Երևան քաղաքում հարմարեցման կարիք ունեցող շինությունների վերաբերյալ և աջակցության կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանն հարց ուղղեց ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանին Մեղրու նորակառույց բժշկական կենտրոնի սխալ հարմարեցված սանհանգույցի մասին՝ խնդրելով պատասխանել, արդյոք վերացվել են թերությունները: ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյանը նշեց, որ այս պահին աշխատանքներ են տարվում դրանք վերացնելու ուղղությամբ և այսուհետ շահագործման հանձնելու պահին առավել ուշադիր կլինեն քաղաքաշինական նորմերը պահպանելու հարցում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» ԻԱՄ-ի նախագահ տիկին Զ. Բաթոյանը խնդրեց ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանին ուշադրություն դարձնել նաև Կապանի տարածքային հարկային տեսչության նորակառույց մասնաշենքի թեքահարթակների մատչելիությանը:

Հանձնաժողովի նիստին ներկա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա. Հակոբյանը խնդրեց մարզպետարանների կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկատվության մեջ հստակ տարանջատել այն աշխատանքները, որոնք կատարվել են հասարակական կազմակերպությունների կամ մարզպետարանների կողմից և այն աշխատանքները, որոնք կատարվում են պետական նպատակային ծրագրերով՝ պետական բյուջեի միջոցների շրջանակներում: Տիկին Հակոբյանը նշեց, որ ներկայացման այն ձևաչափը, որով այժմ ներկայացվում են հաշվետվությունները հնարավորություն չի տալիս հստակ տարանջատել հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների որ մասն է կատարվում պետական բյուջեի հաշվին որը այլ կազմակերպությունների միջոցով առաջարկել, որ յուրաքանչյուր գերատեսչություն ներկայացնի իր կողմից կատարած աշխատանքը հենց այս տեսանկյունից, որպեսզի ներկայացվող փաստաթղթային հաշվետվային ձևերում խառնաշփոթ և կրկնություններ չառաջանա: Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը

նշեց, որ այս հարցին կարելի է լուծում տալ մարզերում և Երևան քաղաքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվային նոր ձևաչափի սահմանումով:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արագածոտնի մարզային հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյանը առաջարկեց մշակել մի կարգ, որով հնարավոր կլինի որոշ պարբերականությամբ հաշմանդամություն ունեցող անձանց քանակական և վերլուծական որոշ տվյալներ տրամադրել մարզպետարաններին:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ անհրաժեշտ է այս առաջարկությունը գրավոր քննարկել մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ և գրավոր ներկայացնել ընդունելի ձևաչափ, ըստ որի համապատասխան մարմինը կներկայացնի պահանջվող տվյալները:

Ամփոփելով օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ քննարկումները՝ Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը շնորհակալություն հայտնեց այն մեծ աշխատանքի համար, որը կատարվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ:

Պարոն Ասատրյանը առաջարկեց Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների կողմից 2015 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

Հանձանաժողովի կողմից հաշվետվություններն ընդունվեցին ի գիտություն:

Որոշվեց՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների ներկայացուցիչների կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղար Ա. Կեսոյանին՝ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հետ քննարկել և մշակել ձևաչափ՝ հանձնաժողովների կողմից տարվա կտրվածքով կատարած աշխատանքների ամփոփման համար՝ օգտագործելով նաև համակարգչային այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան վիզուալ պատկերացում կազմել կատարված աշխատանքների մասին:
3. Մարզպետարանների և Երևան քաղաքի պաշտոնական կայքէջերում տեղադրել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

4. Քննարկել և ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացնել նախընտրելի ձևաչափ և դրա ներկայացման կարգ՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ քանակական և վերլուծական որոշ տվյալները ՀՀ մարզպետարաններ ներկայացնելու համար: .
5. Հնարավորինս օժանդակել Սևանա լճի լողափերից մեկը մատչելի դարձնելու Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի և «Սկարպ» ՀԿ-ի կողմից նախատեսվող քննարկումներին:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյանը: Պարոն Կեսոյանը նշեց, որ Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում 2015 թվականի ընթացքում իրականացվել են օրենսդրական բարեփոխումներ և միջոցառումներ հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման, իրավունքների պաշտպանության, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մատչելի միջավայրի ստեղծման, նրանց բժշկասոցիալական վերականգնման, կրթական ու զբաղվածության ծրագրերի իրականացման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման և այլ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանն 2015 թվականի Տարեկան ծրագրի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումն է եղել: Պարոն Կեսոյանը նշեց նաև, որ Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2015 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվել են ամբողջ ծավալով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի:

Հանձնաժողովը պարոն Ա.Կեսոյանի ներկայացրած զեկույցն ընդունեց ի գիտություն:

Հանձնաժողովի նիստին ընթացքում քննարկվեցին նաև այլ հարցեր:

Հանձնաժողովի անդամ «Հույսի կամուրջ » ՀԿ-ի նախագահ Ս. Թադևոսյանը առաջարկեց անդրադառնալ «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Սուր անկյուն» հաղորդաշարի այն տեսանյութին, որը վերաբերում էր «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնին, որի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնում են որպես ծաղրանքի առարկա: Տիկին Թադրոսյանը նշեց, որ անհրաժեշտ է Հանձնաժողովի

խիստ արձագանքը, քանի որ այդ հաղորդման մեջ ոտնահարվում են մարդու իրավունքները և հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվում են խտրականության:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ այսպիսի դեպքեր հաճախակի են լինում և Հանձնաժողովի յուրաքանչյուր դեպքին առանձին-առանձին անդրադառնալը արդյունավետ չի լինի և նմանատիպ խնդիրներին անհրաժեշտ է տալ ինստիտուցիոնալ լուծում: Նա նշեց, որ մեր ԶԼՄ ներկայացուցիչներին պետք է հնարավորինս տեղեկություն տալ մարդու իրավունքների և էթիկայի կանոնների վերաբերյալ: Պարոն Ասատրյանը առաջարկեց հանձնաժողովի անդամ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի նախագահ Ս. Թադևոսյանին, հայտարարության նախագծի առկայության դեպքում, այն քննարկել հանձնաժողովի անդամների հետ:

Հանձնաժողովի անդամ «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանը տեղեկացրեց, որ 2016 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու հետ կապված միջոցառումների շրջանակներում իրականացվում է նաև «Ունիսոն» ՀԿ-ի կողմից ավանդաբար կազմակերպվող գեղեցկության մրցույթը և հորդորեց մարզային հանձնաժողովների ներկայացուցիչներին այս մասին հայտնել մարզերի բնակիչներին: Մասնակցության համար ցանկացողները (առանց տարիքային սահմանափակման) կարող են զանգահարել 010 52-21-70:

Պարոն Ալավերդյանը տեղեկացրեց նաև քաղաքացի Մարիաննա Չալիկյանի և ՀՀ ԲՍՓ գործակալության միջև դատական գործի հանգուցալուծման մասին և հայտնեց, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը հաստատել է դատական ստորին ատյանների այն որոշումը, ըստ որի քաղաքացի Մարիաննա Չալիկյանին հաշմանդամություն խումբ է սահմանվելու, անկախ նրա կողմից 3 ամսվա անաշխատունակություն թերթիկ չներկայացնելու հանգամանքից: Պարոն Ալավերդյանը նշեց, որ այս որոշումը կարելի է դիտել որպես նախադեպ և առաջարկեց այսուհետ պարտադիր 3 ամիս անշախատունակության թերթիկ ունենալու պահանջը այլևս չներկայացնել հաշմանդամության սահմանման համար դիմողներին:

Հանձնաժողովի նիստին հրավիրված ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԲՍՓ գործակալության իրավախորհդատու տիկին Ա. Սիմոնյանը արձագանքեց, որ համաձայն ՀՀ կառավարություն 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման երկարատև հիվանդությունների դեպքում հաշմանդամության սահմանման համար պահանջ է դրված ներկայացնել 3 ամսվա անաշխատունակության թերթիկ, իսկ Մարիաննա Չալիկյանի դեպքում մարդկային գործոնն է պատճառը, որ դատարանը նման որոշում է կայացրել, և այդ դեպքը նախադեպ դառնալ չի կարող: Տիկին Սիմոնյանը նշեց նաև, որ եթե պարոն Ալավերդյանը առաջարկում է փոփոխել կառավարության համապատասխան որոշումը, ապա անհրաժեշտության դեպքում պատրաստ է քննարկումների:

Հանձնաժողովի նախագահը առաջարկեց հարցը մանրակրկիտ ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն:

Հանձնաժողովի անդամ «Փյունիկ» ՀԿ-ի նախագահ պարոն Հ. Աբրահամյանը առաջարկեց ընդլայնել Հանձնաժողովի կազմը՝ ներառելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցչին:

Հանձնաժողովի նիստին հրավիրված Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ պարոն Կ. Արեյանն էլ առաջարկեց նաև Հանձնաժողովի կազմում ընդգրկել ՀՀ ոստիկանության ներկայացուցչի՝ ճանապարհային ոստիկանության գործառույթների հետ կապված հարցերը արագ կարգավորելու նկատառումներից ելնելով:

Հանձնաժողովի անդամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ տիկին Ջ. Բաղդասարյանը նշեց, որ Հանձնաժողովի կազմի ընդլայնման հետ կապված կա ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ և Հանձնաժողովի առաջարկները նույնպես կարելի է ընդգրկել այդ նախագծում:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ առաջարկները լիովին ընդունելի են:

«Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահ պարոն Հ. Հունանյանը ներկայացրեց 2015-2016 թվականների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը՝ նշելով, որ պետական բյուջեի միջոցների շրջանակներում տրամադրվող վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաները մարզեր է փոխադրում իր կազմակերպության հաշվին: Պարոն Հունանայանը նշեց որ 2016 թվականին նույնպես շարունակվելու են բարեգործական այլ ծրագրեր:

«Սեյվ դը Չիլդրեն» միջազգային կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչության անդամ տիկին Ի. Սարգսյանը ներկայացրեց տեղեկատվություն Հայաստանում, Վրաստանում, Կոսովոյում, Ալբանիայում, Բոսնիա և Հերցոգովինայում «Մարգարետ Քարգիլ» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող եռամյա ծրագիրի վերաբերյալ՝ նշելով, որ Երևան և Արմավիր քաղաքներում կհիմնվեն ցերեկային խնամքի կենտրոններ, որտեղ հաշմանդամություն ունեցող 300 երեխաներ հնարավորություն կունենան ստանալ որակյալ ծառայություններ: Ծրագրի հիմնական շահառուները կլինեն հաշմանադամություն ունեցող 0-18 տարեկան երեխաներն և նրանց ընտանիքների անդամները: Ծրագիրը նախատեսում է էապես բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների համար տրամադրվող որակյալ ծառայությունները՝ համագործակցելով պետական կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքահեն հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը կարևորեց այս նախաձեռնությունը՝ շնորհակալություն հայտնելով «Սեյվ դը Չիլդրեն» միջազգային կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչությանը:

«Հավատ» ՀԿ-ի նախագահ Ս. Ժամկոչյանը հարց բարձրացրեց Եվրոպական արտադրության լողական սարքերի մարտկոցների ներկրման ժամանակ մաքսազերծման հետ կապված խնդիրների վերաբերյալ՝ խնդրելով աջակցություն ցուցաբերել այդ խնդիրների լուծմանը:

Հանձանաժողովը այլ հարցերը քննարկելուց հետո որոշեց՝

1. ՀՀ ԲՍՓ գործակալության և «Ունիսոն» ՀԿ-ի կողմից ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Մարիաննա Չալիկյանի գործի հետ կապված :
2. Եվրոպական արտադրության լողական սարքերի մարտկոցների մաքսազերծման հետ կապված խնդիրը գրավոր ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարության համապատասխան ստորաբաժանում:
3. ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել՝ Հանձնաժողովի անհատական կազմում նոր անդամներ ընդգրկելու նպատակով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**